


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և Գրքային համար 8 ՄՀՃ.
Վերականգնող և Գրքային համար 10 ՄՀՃ.
Վերականգնող և Գրքային համար 4 ՄՀՃ.
Վերականգնող և Գրքային համար 5 ՄՀՃ.
Մանկագրության տարբերակի անդամի համար 3 զուգույն, երկու անգամի համար 2 զուգույն, առանց անգամների համար զատ առկարկով իսկ կըլայ :



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 3 ՅՈՒՆԻԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

1878

ՅԵՏԱՊԱՐԶ ՀԱՅԵԱՅԻՐ ՄԸ 1877
ՏՄԲԻՈՅՆ ՎՐԱՅ

Մնացող տարի այս ժամանակ և Պոլսոյ դեսպանատնից հարգելի իւր նիւստերը կը շարունակէր, և յոյսեր կա լին թէ պիտի կարենար ներկայ խնդիրները լուծել: Մնող ժամանակ արտաքին կարգի երեսփոխան Լորտ Սալիպըրի տաղանդավոր թիւնները Ռուսիոյ գեապան ինտերմիտի զորավարէն ալ ընդունուեցան, և դեսպանատնը հուրը վերջապէս առաջարկեց Բ. Դրան որ թող տայ իւր քանի մը գաւառացի մէջ առժամեայ կերպիւ օտար զօրք դնել, և որոշեալ բարեւորութիւններ իւրաքանչիւր մեծ տէրութեանց ներքեւ գործադրել: Բայց Օսմանեան կառավարութեան այն ժամանակի նախարարը այս առաջարկութեանց հաւանութիւն չը տուին: Դեսպանատնից հարգելի իւր առաջարկութիւնները չափաւորեց և խնդրեց որ Գարատաղի սակաւ ինչ հող արուի, Սերիկոյ հետ յաւաք քան զպատերազմն վիճակին վերադառնալու պայմանաւ հաշտութիւն կնքուի, Բ. Դրանը տէրութեանց հետ համաձայնութեամբ անուանէ Պօսնիոյ Հէրսէքի և Պոլսոյ զօրք կառավարէնը, լուրջ բարեկամորդութիւններ ի գործ դնէ, և տէրութիւնը երկու գործակատար անուանեն հաստատեալ օրինաց գործադրութեան վրայ հակելու պաշտօնով: Միտհաթ փաշան որ այն ժամանակ Մեծ-Եպարքոս էր, այս առաջարկութիւնները մերժելու որոշում տուաւ, և Բ. Դրանը մեծ ժողով մը հրաւիրեց, ուր քանի մը քրիստոնեայ անգամը ալ ներկայ էին: Այն ժողովը զրեթէ միաձայնութեամբ Մեծ-Եպարքոսին կարծիքը հաստատեց: Հետեւեալ դեսպանատնից հարգելի իւր առաջարկութեանց և Սալիպըրի տաղանդական մէկ ատենախօսութեամբ, և տէրութեանց դեսպաններն ու երեսփոխանները մայրաքաղաքէս մեկնեցան:

Հաստ չանցած Միտհաթ փաշան ալ Տօյմա Պաշէնի պարտաւ հրաւիրուելով եպարքոսական կնիքն իրմէ առնուեցաւ և անմիջապէս իզգէտութիւն շոգեւոր վերադարձելու հարապարհեցաւ: Եւ ինչպէս փաշան Մեծ-Եպարքոս անուանեցաւ: Այս դէպքը վերաբերւոյ մանայ մէջ եղած էր: Բ. Դրանը նոյն միջոցին իրաց վիճակին ծանրութիւնը գիտնալով, գլխաւորապէս Մեծ զօրք տէրութեան յարգու:

րանօք բանակցութեան մաս Սերիկոյ և Գարատաղի հետ հաշտութիւն կնքելու համար: Սերիկոյ յաւաք քան զպատերազմն վիճակին վերադառնալու հաւանութիւնը չէր կրնար մերժել, քանզի բոլորովին պարտեալ էր, և Բ. Դրանը տէրութեանց հաճելի լըլալու համար Սերիկոյ հետ հաշտութիւն կնքեց, առանց բնաւ պահանջութեան հանելու: Բայց Գարատաղ պարտեալ չէր, և իւր ամուր գիւրքերէն օգուտ քաղելով քանի մը յաջողութիւններ ալ ձեռք բերած էր, ուստի իւր սահմաններուն մօտ մէկ երկու գաւառ կը խնդրէր: Բ. Դրանը կարելի եղածին չափ Ներքալ իշխանին երեսփոխանաց հետ չափաւոր պայմանագրութիւն մը պատրաստեց, որ երեսփոխանական ժողովին չափաւորապէս, քանզի կայսերական կառավարութիւնն իւր ներքին ընդհանուր բարեկարգմանց մասին եւրոպայի երաշխաւորութիւն տալու համար փութացեր էր Օսմանեան Պաշտօնագրութիւնը ժամ յաւաք գործադրել, և երեսփոխանաց ժողովին առաջին բացումը կատարուած էր Տօյմա Պաշէնի պարտին մէջ փառաւոր հանդիսիւ և կայսերական ատենախօսութեամբ: Գարատաղի երեսփոխանը ձեռնուեցաւ ետ գարշան, և Գարատաղի հետ պատերազմը նորոգեցաւ:

Միւս կողմէ Ռուսիա իւր ժամերն ի զուր չէր վատնէր: Ինտերմիտի Բեղրապուրկ վերադառնալէ ետեւ մասնաւոր պաշտօնով եւրոպայի մայրաքաղաքները զրկուեցաւ: Եւ ինչպէս լայն մէջ յաջողեցաւ Լորտ Տէրպի հետ գաւառագիր մը կնքելու, որ Բ. Դրան կողմէ մերժուեցաւ: Կորստագրի իշխանն անմիջապէս գաւառագիր վերջնադրի փոխեց, և պահանջեց որ Բ. Դրանը Բեղրապուրկ արտաքին կարգի դեսպան մը զրկելով ծանուցանէ թէ տէրութեանց առաջարկութիւնները կրնուին: Բ. Դրան իւր անկախութեան չհրաժարելու որոշման մէջ անգործուելի մնաց, և այսպէս բանակցութեանց ամուլ տալարեղը գործուելով, Սեւրասիոյ Բ. 1877 ապրիլ 12/24 ին Գիւնէֆի բանակէն պատերազմի յայտարարութիւն հրատարակեց: Արդէն ձմեռուան մէջ Ռուսիա, որ գրեթէ 1876 նոյեմբերին որոշած էր իւր բանակը շարժուել վիճակի մէջ դնել, ամեն պատրաստութիւն տեսած լըլալով, Չարին եղբայր Ներքալ մեծ գուրբին հրամանաց ներքեւ գրուած բանակին խնդրի Բրուլ զեան անցաւ և Ռուսիայի մասաւ: Բայց Ռուսաց բանակը բարձր պաշտօնատարաց անհոգութեան կամ խաղաղութեան պատճառաւ ամբողջ վիճակի մէջ չէր, և վաշտերը շատ պակասութիւններ ունէին: Ռուսիայի

թէ և տեսականապէս վեհ. Սերիկոյն հապտակ էր, բայց Ռուսերն համակրութեամբ ընդունեց, և կարող իշխանն ոչ միայն Ռուսաց ներկայութեան օգուտ քաղելով ժողովոյ հետ համաձայնութեամբ անկախութիւն հռչակեց, այլ և Ռուսաց հետ գաւառագիր եղաւ և Բ. Դրան դէմ ինք ալ պատերազմ հրատարակեց: Նոյն միջոցին Գանուբի ջուրերը դեռ շատ բարձր էին, և Ռուսը յամրաքաղ յառաջանալով այն մեծ գետին եղբայր հասան, և իրենց թնդանօթները շարել սկսելով երկու կողմէն ռաբակութեան ձեռնարկուեցաւ: Օսմանեան զօրքը Ռուսիայի չանցաւ, քանզի Բ. Դրան զինուորական խորհուրդներուն մէջ որոշուած էր որ բոլորովին պաշտպանող կան գիրք բռնուի: Ռուսը եւրոպայի կողմէ Գանուբի եղբայր կ'ապասէին, բայց Սերիկոյ կողմէն այնպէս չէր կողմանալ բանակին երեք մաս բաժնուելով, ալ թէ Զիւրիք-Սերիկոյ Պաշտօնի վրայ քաղեց: Կիւրդներ Լօքիս Մէլիքօֆ զօրավարին հրամանաց ներքեւ Սեւրասիոյ զօրքը հրամանաց ներքեւ երեւանէն ելնելով Պաշապիտը գլխաւորեց, Մայիսի մէջ Երասհանի բերդը տկար գլխաւորութեան մ'իտաւ Ռուսաց ձեռք անցաւ: Ռուսը անմիջապէս կարող պաշարեցին, և իրենց մնացեալ զօրութեամբ դէպ ի կարին կը յառաջանային: Օսմանեան զօրաց հրամանատար Մուխթար փաշան Սեւրասիոյ յառաջ քաշուած և Զէվիսի ամուր գիրքը բռնած էր: Մէլիքօֆ յանդիս ամուր մէջ հան յարձակուեցաւ, բայց պարտուելով ետ դառնալու պարտաւորեցաւ, մանաւանդ որ Տէր Դուհասովի զօրաբաժնին ալ Տէր Պաշապի պատերազմին մէջ ծանր հարուած կրելով հապճեպաւ յետս կը նահանջէր: Մուխթար փաշան Զէվիսին յառաջացաւ, և Ռուսերը պարտաւորեց կարսի պաշարումը վերջընելու: Խամիլի Հազգի փաշան ալ Տէր Դուհասովի վանեց մինչև իկաթի, թէ և այս զօրավարն յաջողեցաւ Պաշապիտի մէջ պաշարուած Ռուսերն ազատել: Ռուսաց այս յարձակումն և յետոյ նահանջումը պատճառաւ եղաւ Սեւրասիոյ և Պաշապիտի խեղճ և խաղաղ Հայ ժողովրդաց վայրագ փերտերու բարբարոսութեանց երկարաց ըլլալու: Թէ և անոնցմէ մաս մը Ռուսաց հետ ի միտին գաղթեցին, բայց մնացեալները զոհ եղան փերտերուն տնջութեանց, որք Օսմանեան զինուորացիները, հուսկ ուրեմն Մուխթար փաշային կողմէն վաճառուեցան:

Օսմանեան զօրքը Պաշտօնի կողմէն ալ Տէրպի փաշայի հրամանաց ներքեւ Ռուսերն իրենց դրուած գիրքը

րէն վանեց, և Սոխումը նաւատորմին չնորհիւ գրաւուելով Ֆալը փաշայի հրամանաց ներքեւ զօրք դնուց հան ալ, ուր կողմանեան իւրեանց իրենց անկախութիւնը վերականգնելու համար ապստամբութեան դրօշ պարզած էին:

Յունիս 12/24 ին Ռուսը գլխաւորանց իպրայիլէն և կայսցէն նաւակներ գրին և Գանուբն անցնելով Տօյմա զօրքը հրատարակեց: Օսմանեան զօրքը սկսանք Չիւսիք ման զօրավարին հրամանաց ներքեւ: Երեք օր ետքն ալ իրենց գլխաւոր բանակը Չիւսիքայէն նոյն գետն անցաւ և Չիւսիք անմիջապէս գրաւեց: Այս երկու անցքն ալ գրեթէ առանց գաւառութեան և առանց Օսմանեան զօրաց կողմէ մեծ գլխաւորութեան կատարեցաւ: Գանուբի մէջ Օսմանեան թնդանօթակիր անկողիներն և փոքր զրահաւորներն որք կրնային Ռուսաց շարժումներն արգելու, անկարող եղած էին ազատ շարժումներ ընելու, քիսաւուրապէս Ռուսիայի կողմէ գրուած թնդանօթներէն և գետին մէջ ձգուած ականներէն արգիլուելով, Ռուսը մինչև թրնօլա յառաջացան և Բրուսիոյ զօրավարը Նիկոպոլիսը գրաւեց: Բայց այս յաջողութիւններով դոհ չեղան և Կուրքօ զօրավարը գլխաւորապէս հեծ ելադրօք խայկն-Պոզապէն Պաշտօններն անցաւ և թըրակիոյ գաւառներն ինքնու ճիւղայի կիւրճն ալ ետեւէն ու առջինէն յարձակումը ձեռք անցուց, ուր Ռուսը Սիւլի Նիքօպոլի ամուր գիրքը գրաւեցին: Այս քանի օր անձամբ բանակն եկած էր, թրնօլայէն խիստ յայտարարութիւն մը հրատարակեց Պոզապիտի իսլամացի ուղղափառ յորմէ կը տեսնուէր որ Ռուսիա այս նահանգը բոլորովին թուրքիայէն բաժնելու միտք ունէր:

Ռուսաց արշաւանքն սպառնալու կերպարանք առած էր: Օսման փաշան Նիկոպոլիս օգնութեան երթալու համար վիտինէն ծանրաց և լաւ բայց իկոպոլիս արդէն գրաւեալ ըլլալով, ինք ալ գնաց Բլէֆան գրաւեց, հոն գտնուած Ռուսաց հեծ ելադրօք վանելով: Ճիւրեկը Շուրտէր զօրավարին հրամանաց ներքեւ Ռուսը Օսման փաշային վրայ յարձակեցան յուսիս Զին, բայց առաջին պարտութիւն մը կրեցին: 2500 էն աւելի կորստեամբ: Անմիջապէս Բրուսիոյ զօրավարին հրաման արուեցաւ նորին Բլէֆայի վրայ յարձակելու, և իրեն օգնութեան զրկուեցան Շարժութիւն և Սեւրասիոյ զօրավարն և Այս յարձակումն յուսիս 10/22 ին եղաւ, և Ռուսը ծանր պարտութիւն կրելով տան հազարի չափ կորուստ տուին: Նիքօրա մեծ գուրբն և Չարք փութացին թրնօլան ձգել և Բլէֆայի առջև երթալ իրենց յետոյ նահանջ:

ման գիծը չիղուելու համար, և հաս-
ճեպով Ռուսիայէն օգնութիւններ ու-
զել սկսան : Բ. Դոսն ալ տեսնելով
իւր Բուսիւնի բանակներուն անբա-
ւականութիւնը, Սիւլէյման փաշային
բանակը Գարատաղէն արտադա-
րեւել տուաւ : Սիւլէյման փաշան
Գարատաղցիները սաստիկ պատժած
էր և Չէթիւնէ մտնելու վրայ էր ,
երբ հրաման առաւ թրակիա երթա-
լու , ուր Էսքի Զաղրայի մէջ կու-
քօյի բանակին յաղթելով Ռուսերը
մինչև Շիրկայի կիճը վանեց , բայց
Սիւլէյման Նիքօլայի ամուր գիւղին վը-
րայ բրած յարձակումներն անօգուտ
կորուստներէ զատ հետեւեալ չու-
նեցան : Թրակիոյ Պուլղարներն ալ
կոտորածի ենթակայ եղան , բայց
Պուլղարներն ապստամբած և իրենք
ալ սպաննութիւններ ի գործ դրած
էին :

Մէհմետ Ալի փաշան Դանուբեան
բանակին ընդհանուր հրամանատար
կարգուած էր փոխանակ Ապարիւ
Քէրիմ փաշային , որ սպարապետ
Բէսիֆ փաշային հետ մայրաքաղա-
քըս դառնալով Լեմնու կղզին աք-
սորեցան : Մէհմետ Ալի փաշան՝ որ
ի սկզբան յաղթութիւններ տանելով
Գարիլիչը մինչև Պիէլա վանած էր ,
չէր քօշտիլի պատերազմին մէջ ան-
յաջող եղաւ , և իւր տեղը Սիւլէյման
փաշան հրամանատար կարգուեցաւ :
Սիւսուսի արշաւանքն ալ ապարդիւն
եղելով , Ֆաղը փաշան իւր զօրա-
բաժնով Դանուբեան բանակը զըր-
կուած էր , Տաղստանի ապստամբու-
թիւնն ալ չկրցաւ յաջողիլ , և հաղա-
րաւոր Տաղստանցիք իրենց ընտան-
եօք և անասուններով հազիւ կրցին
Օսմանեան նաւատորմը նստիլ և թուր-
քիա գաղթել :

Ռուսք Բլէյնայի դէմ իրենց պատ-
րաստութիւնները լրացնելով , չորս
օր սաստիկ ռմբակոծութիւնէ ետեւ
սկսաւ : 11 ին (ըստ նոր տեղեւորի)
յարձակման սկսան : Թէև նոյն օրն
Աքսայէլէֆ երկու ամբողջ առաւ ,
բայց մեծ կորուստամբ ետ տալու
պարտաւորեցաւ : Ռուսք իրենց միւս
յարձակմանց մէջ ալ անյաջող եղան
մեծ կորուստներով : Իրենց պաշ-
տօնական հաշիւներուն նայելով այս
յարձակմանց մէջ տառնեցիւ հա-
զար հինգ հարիւրէն աւելի կորուստ
ունեցած էին :

Հայաստանի մէջ ալ Մուխթար
փաշան Կէտիքէրի յաղթութիւնը
տարաւ , և Կաղի պատուանդանն ա-
ռաւ Օսման փաշային հետ : Բայց
Ռուսաց օգնութիւններն հասնիլ սկը-
նած էին , Հոկտ . ամսոյ մէջ Ռուսք
Ալաւա Տաղի , յաղթութիւնը տարին
Լազարէֆ զօրավարին Օսմանեան բա-
նակին ետեւի կողմը յաջող շարժում
մը ընելուն շնորհիւ Անկէյ ի վեր պա-
տերազմին բաղդը Ռուսաց նպաս-
տաւոր եղաւ : Կարող նորէն պաշա-
րեցին և յարձակումս գրաւեցին :
Կարինն ալ պաշարիլ սկսան , և թէ-
պէտ Ալիքիյէ ամբողջ վրայ ըրած
յարձակումին ի դերե եղաւ , բայց
Տէվէ Պոյնուլի ամուր գիւղը գրա-
ւած են : Իսմայիլ Հաֆէի փաշան
Պայաղլուի կողմերէն մազապուր ետ
դառնալով Մուխթար փաշային հետ
միացաւ : Հոսիլ ուրեմն Մուխթար
փաշան մայրաքաղաքս եկաւ և իս-
մայիլ Հաֆէի փաշան Կարնոյ զօրաց
հրամանատար մնաց :

Իսկ Բուսիւնի կողմը Տօնի Տուպ-
նիքի պատերազմէն ետեւ Բլէյնա
բոլորովին պաշարեցաւ . այսու ամե-
նայիւ Օսման փաշան մինչև վերջը
գիւմադրեց , և երբ իւր պաշարն ըս-
պառեցաւ , բուռն յարձակումս պա-
շարումը խզելու փորձ փորձեց դեկտ.
9 ին (ըստ նոր տեղեւորի) , բայց հինգ-

ժամ սաստիկ կռուէ մ'ետեւ հար-
կադրեցաւ անհետար ըլլալ իւր
ամբողջ բանակաւ : Այս կարեւոր յա-
ջութեան վրայ Ռուսաց Բլէյնայի
բանակն աղտոտելով յառաջ խաղա-
սկսաւ : Մէհմետ Ալի փաշան Սօֆիա-
յի կողմը նոր բանակ մը կազմելու
հրաման տուած էր Բլէյնայի օգնու-
թեան հասնելու համար , բայց ոչ
իրմէ առաջ Շէվքէթ և Շաքիր փա-
շաներն , ոչ ալ ինք կրցին թշնամ-
ւոյն բաղմունքեան յաղթել : Սիւլէյ-
ման փաշան Դանուբեան բանակին
մեծ մասին հետ թրակիա անցաւ ,
գ. ժ. արդարաւ առանց կարեւոր յա-
ջութեան , և երկու օրէ ի վեր
աղտոտիլ զրոյցներ կը լսուին իւր և
Շիրքայի Օսմանեան բանակին վրայ :
1878 տարին տնուր կ'սկսի . թըշ-
նամին Օսմանեան տէրութեան երկ-
րորդ մայրաքաղաքին (Ադրիանու-
պօլսոյ) կ'ապառնայ , և հաւանական
է որ Կ. Պօլսոյ վրայ ալ քալէ՝ եթէ
զինադադար և հաշտութիւն չլինի
չուտով , որոյ համար ծանր պայման-
ներ կառաջարկէ : Իսկ Եւրոպա մինչև
ցարդ անտարբեր կը մնայ :

Այս ներքին կարեւոր և մեծ դէպ-
քելուն առջև Եւրոպական իրողու-
թիւնները բոլորովին կարեւորու-
թեան զօրիկ են մեզ համար , ուստի
զանց կրնենք դանդաղ : Միացեալ Ի-
տալիա իւր առաջին թափաւորը կո-
րոյս : Վիքթոր Լամանուէլ վախճա-
նեցաւ , և իւր անդրանիկ Ռամպիթ
որդին իրեն յաջորդեց : Վիքթոր
Լամանուէլ 1820 մարտ 14 ին ծնած
էր , հետեւաբար յետուն և ութ տա-
րեկան էր : 1848ին իբրեւ զինուոր Նօ-
վարայի ճակատամարտին մէջ քա-
ջութեամբ կռուեցաւ Աւստրիացւոց
դէմ , բայց իւր հայրը՝ Կարլոս Ալ-
պերթ՝ յաղթութեամբ նոյն օրն հըրա-
ժարեցաւ , և Վիքթոր Լամանուէլ
Սարտենիայի թագաւոր եղաւ : Սը-
ժանայիշատակ Գալսերի օգնութեամբ ,
և գլխաւորապէս ճարտար քաղա-
քականութեան , հօր դաշնակցու-
թեան և յաջող պարագայից շնոր-
հիւ՝ կարող եղաւ Իտալիոյ բաղձա-
ցեալ միութիւնն ի դուրս հանել , և
Հռոմի Իտալիոյ մայրաքաղաք ընել՝
միշտ սահմանադրաբար կառավարե-
լով և այսպէս անմահ անուն և փա-
ռաւոր էջեր գրաւեց պատմութեան
մէջ :

Վերջին թղթաբերով եկած Եւ-
րոպական լրագրաց մէջ հետեւեալ
տեղեկութիւնները կը կարգանք :

Բեդրասուրի 50 դեկտ .
Աժանա Ռիւս լրագրը առաւ կը հանէ
լրագրաց ոմանց հրատարակած այն լու-
րը թէ Անդրիոյ կառավարութիւնն իմաց
տուեր է տէրութեանց թէ Անդրիոյ շա-
հերը փառաւ ազատ պահելու համար Ա-
րեւելքի մէջ քանի մը տեղեր պիտի գրաւէ :

Անդրիոյ կառավարութիւնը պարզա-
պէս երկուց յայտնած է Ռուսիոյ կա-
ռավարութեան թէ Կ. Պօլսոյ մինչև իսկ
առժամանակեայ գրաւումն Անդրիոյ հա-
սարակաց կարծիքը կրնայ դրուել , որով
Անդրիոյ կառավարութիւնն ալ կը հար-
կադրի Անդրիոյ շահերը պաշտպանելու
համար նախադրուելեան միջոցներ
ձեռք առնուլ :

Գարով Անդրիոյ միջնորդութեան խնդ-
րոյն , Աժանա Ռիւս կը յայտարարէ թէ ,
հանրազգային իրաւանց կանոններուն
համեմատ՝ միջնորդութիւն մ'այն ժամա-
նակ միայն կրնայ ըլլալ , երբոր երկու
պատերազմող կողմերը խնդրեն :

Արդ՝ Ռուսիա , թէև միշտ պատրաստ
է հաշտութեան առաջարկութիւններ ըը-
սելու երբոր Դրան կողմէ ուղղապէս ի-
րեն ներկային , դուրսէն որ և է միջնոր-
դութիւն մը ընդունելու դիտաւորութիւն
ցոյց տուած չէ երբէ :

Բեդրասուրի 51 դեկտ .
Կէս պաշտօնական թերթերը կը հաս-

տատեն թէ նախադրուելեան միջոցներ
ձեռք առնուլ մասին Անդրիոյ վերաբը-
եալ այլ և այլ դիտումներն՝ ուղղապէս
պատերազմին մասնակցիլ կը համարուին
Ռուսիոյ կողմէն : Ռուսիա չընդունիր , կը-
սեն , մանաւանդ Օսմանեան տէրութեան
որ և է ծովեզերեայ կէտերէն միոյն Անդ-
րիոյ կողմէ գրաւումն , և կը յայտարա-
րեն թէ Անդրիոյ և Ռուսիոյ կառավա-
րութեանց վերջին օրերս ըրած բանակ-
ցութեանց մէջ Կ. Պօլսոյ Ռուսաց կողմէն
գրաւման պատահականութեանը վրայ
միայն խօսք եղած է . գրաւում մը , ու-
րոյ դէմ Անդրիոյցի կը բողոքեն :

Փարիզ 5 յունի .
Այսօրուան թան լրագրին մէջ հետեւ-
եալ կը կարգանք :

Բեդրասուրի Անդրիական դեսպան
Լորտ Լօթթիւս շարաթ օրը Կորչաքօֆ
իշխանին ծանուցադիր մը մատոյց , որով
Անդրիոյ կառավարութիւնն յանուն թուր-
քիոյ կը հարցնէր կայսեր թէ կը հաճի՞
խաղաղական բանակցութեանց մտնել
Թուրքիոյ հետ : Կայսեր կառավարու-
թիւնը պատասխանեց որ եթէ Թուրքիա
զինադադար կը խնդրէ , պէտք է ուղղակի
Պուլղարիոյ Ռուսական զօրաց սպարապե-
տին շրմէ :

Պերմիսկէմ 51 դեկտ .

Ազատական ընկերակցութեանց դաշ-
նակցութիւնն այսօր գումարուելով որո-
շեց որ ամեն տեղ գտնուող ընկերակցու-
թեան ժողովները (միթինկ) գումարուե-
լով՝ երեսփոխանութեան ուղղեալ խնդ-
րադրեր պատրաստեն , որպէս զի երես-
փոխանական ժողովն համաթիւնն չտայ
Թուրքիոյ ամբողջութիւնն անվթար պա-
հելու կամ այդ երկրին իւր կամակորու-
թեան և յոյի վարչութեան հետեւեալ-
ներէն աղտոտելու նպատակաւ որ և է
ջանք մը ընելու :

Վիեննա 4 յունի .

Նիքօլա մեծ դուքսն 180 հատ Ա. Գէ-
որգայ խաչանշան զրկեց Պէլլրատ , վեր-
ջին պատերազմներուն մէջ նշանաւոր ե-
ղող Սերվիացի սպայից արուելու համար :
Հօրվաթօլիչ զնդապետն ամենէն առաջ
պատուանշան ստացաւ Բիթթի (Շէհր-
Բէյ) անման համար :

Կովկասեան դաւառին և Ռուսական

Հայաստանի դաւառաց մէջ 36000 նոր
զօրք պիտի գրուին Սուխոմոֆի գործա-
րը 4 գունդ . նոր հեծեալազօր կը կազմէ
Կովկասի մէջ , մեծ մասն իսլամներէ
բաղկացեալ , որք Դանուբի Ռուսական
բանակը պիտի զրկուին :
Մօրիէն՝ Բօթթ լրագրը կըսէ թէ
Ռուսիոյ կայսեր կարծեցեալ խաղաղա-
րական դիտաւորութիւնները տարօրինակ
հակապատկեր մը կընծայեն Ռուսիոյ մէջ
շարունակեալ զինուորական ամենամեծ
պատրաստութեանց : Ինչ բանի համար
են այդ փութանք և ահա պատրաս-
տութիւնները : Թուրքիա յաղթուած է ,
և տկար զօրութիւն մը միայն ունի հե-
մա , զոր իսպառ ընկճելու համար Պուլ-
ղարիոյ մէջ գտնուող Ռուսական բանակ-
ները շատ իսկ են : Կերեի ուրեմն որ
Ռուսիոյ պատրաստութիւններն ուրիշ
գաղանի նպատակ մ'ունեն : Կը ցուցնեն
թէ Ռուսերն ընդարձակ և աւելի զի-
տումներ կը տածեն , որոց գործողութե-
ան մէջ Եւրոպիոյ կողմէն ընդդիմու-
թեան կամ դոնէ տէրութեանց ոմանց
կողմէ գժուարութեանց հանդիպելու կա-
կած ունին :

ՊԱՏԵՐԱԶՄԱՆ ԼՈՒՐԵՐ

Թաթար-Բաղադըքի առջև տըր-
ւած վերջին ճակատամարտէն ետեւ՝
Սիւլէյման փաշան մինչև Գարուճըք
եւ քաշուեր և հոն ալ ուրբաթ շա-
բաթ և կիրակի օրերը դարձեալ պա-
տերազմի բռնուեր է Ռուսաց հետ :

Գըղանլըք , Էսկի-Զաղրա , Էէնի-
Զաղրա և Զըրփան Ռուսաց ձեռքն
անցած են : Կըսուի թէ Սիւլէյման
փաշան և իւր երկրորդական զօրա-
վարները՝ Շաքիր փաշա , Պէյրըք փա-
շա և այլն՝ Գարուճըքի առջև թշնամ-
ւոյն գիւմադրելով՝ յաջող են իրենց
զօրաց և պատերազմական միջերայ
մէջ մասը Ֆիլիքի և Ադրիանուպօլիս
զրկել :

Երեկ զրոյց կը պտըտէր թէ Բու-
մէյի երկաթուղին Ֆիլիպէի և Ադ-
րիանուպօլիս միջև՝ Թրնօփա՝ Մէյ-
մէյի բուռն տեղը կարուեր է Ռու-
սերէն : Կըսուի նաեւ թէ Սիւլէյման
փաշան ալ դէպի բռնուեր է . բայց
այս վերջին զրոյցն ստուգութեան
կը կարօտի :

Շիրաքայի բանակին գալով՝ Պա-
սիրէթ լրագրը կըսէ թէ՝ Ռուսերը
Մուֆուս-Բէյի կիճէն գլխերանց
Պալքաններն անցնելով՝ յանկարծ
Գըղանլըքի վրայ յարձակելու և սաս-
տիկ կռուէ մ'ետեւ՝ մէջը գտնուող
Օսմանեան զօրաց մեծ մասը գերի
բռնելու են :

Հետեւեալ օրը Շիրաքայի Օսման-
եան զօրաբանակին բռնած գիւղերը
պաշարելով , երեքօրեայ արկու-
նուշտ պատերազմէ մ'ետեւ յիշեալ
զօրաբանակն ալ գերի ինկել է :

Վաղըթ լրագրը կըսէ թէ՝ Ռուսք
ամեն ջանք ի գործ կը դնեն , որ-
պէս զի յունիս 5/17 էն առաջ՝ այն
է Անդրիոյ խորհրդարանին բացուե-
լէն առաջ Ադրիանուպօլիս հասնին :

Կարինէն եկած վերջին լուրերը
կը ծանուցանեն թէ Տէր Ղուկասօֆի
զօրաբաժնին Ըլըճայի առջև միացեր
է Գոմարօֆի զօրաբաժնին հետ , ու-
րով Կարին այն կողմէն ալ ամբողջա-
պէս պաշարուելու և ընդհանուր
յարձակում մը կրելու մտաւորաւ վը-
տանգին մէջ կը գտնուէր :

Փաղաքին մէջ 6000 չափ հի-
ւանդք կան մեծ մասը ժանտառնե-
դէ բռնուած :

Բիւլիկներուն ալ մեծ մասը նոյն
հիւանդութեան բռնուած են :

Մայրաքաղաքի դեսպանատու-
ներէն մէկուն եկած հեռագիր մը
կը ծանուցանէ թէ Գարատաղցիք
Անթիպարի քաղաքն առել են :

Պասիրէթ լրագրին հետեւեալ
լուրը կը հրատարակէ .

Կիւմանաք թէ՝ Անդրիոյ դես-
պան Պ. Լէյքըտ նախընթաց օրն իւր
կառավարութեան հեռագիր մը ըս-
տանալով արտաքին դործոց նախա-
րարին հաղորդեց է :

«Յիշեալ հեռագրին իմաստն այս
է թէ՝ Անդրիա գիտաւորութիւն
չունի ներկայ պատերազմին մասնակ-
ցելու , ոչ ալ Օսմանեան տէրութեան
ուրիշ կերպիւ օգնելու . այլ միայն
հաշտութիւն կընքուած ժամանակ
անոր անկախութիւնն ու ամբողջու-
թիւնը պաշտպանելու պիտի աշխա-
տի » :

ԶԻՆՆՈՒՄ

Բուսիւնի Ռուսական զօրաց ընդ-
հանուր հրամանատար Նիքօլա մեծ
դուքսէն սպասուած պատասխանը
կիրակի առաւօտ եկաւ :

Մեծ դուքսը կը յայտարարէ թէ
պատրաստ է զինադադար պայմանե-
րուն նկատմամբ բանակցութեան մըտ-
նել զինուորական հրամանատարաց
և կամ այս խնդրոյ համար Օսման-
եան կառավարութեան կողմէ եկող
պատուիրակաց հետ : Կըսէ նաեւ թէ
անձամբ Գըղանլըք պիտի երթայ
պատուիրակին բուն ողջանալու :

Այս հեռագիրը գալուն պէս Բ.
Դրան նախարարը ի ժողով գումա-
րեցան , և Վիհ . Սուլթանին հետ ալ
խորհրդակցելէ ետեւ՝ որոշեցին իւր
կայսերական պատուիրակ Նիքօլա մեծ
դուքսին զրկել արտաքին գործոց նա-
խարար Սերվէր փաշան և կայսերա-
կան գանձուն վերատեսուչ Նամիդ-
փաշան :

Յիշեալ նախարարը այս առաւօտ

ճանաչող պիտի ելնէին յատուկ շոգե-
կառքով:

Թուրք լրագիրք կը տնէ թէ յիշ-
եալ նախարարք կարճատե ցինադա-
դար մը պիտի կնքեն Նիքոսի մեծ
դռնքին հետ՝ որչափ և ծանր ըլլան
պայմանները:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Լոնտոն 12 յունի:

Այսօր դռնաբաց անապատայի խոր-
հուրդն 2 3/4 ժամ տեւեց:

Երեսփոխանաց ժողովոյ անդամ Պ.
Ռոպինք իւր ընտրողաց նախաձեռն
դրով, ներկայ պատերազմին անարդա-
րութիւնը կը հաստատէ, և Ռոպինք որ
և է երկրակալութիւնն Անգլիոյ համար
պատերազմի առթիւ կը նկատէ:

Մայիս 13 յունի:

Հորնալի ծովապետը Լոնտոնէն հե-
ռագիր մ'ստանալով, իւր սպայակոյտին
հետ Սուեզի զբաղակարգով այսօր ճան-
քայ ելաւ Արեւելք երթալու համար:

Հունի 12 յունի:

Պապն հաճութիւն տուաւ որ Վիքթոր
Էմանուէլ թագաւորին յուղարկուող
թիւնն Հռոմի եկեղեցիներէն միոյն մէջ
կատարուի, բայց ոչ զվառար կամ մայր
եկեղեցւոյ մը մէջ:

Հունի 12 յունի:

Գերմանիոյ դաշաճառանգ կայսրը-
դին շքեղ ուղեկցութեամբ քաղաքս ե-
կաւ վախճանեալ Վիքթոր Էմանուէլի
յուղարկուողութեան ներկայ գտնուելու՝
ի դիմաց Վիլհէլմ կայսեր:

Մայիս 13 յունի:

Չորս դրահաւորք կը պատրաստուին
Հորնալի ծովապետին ետեւէն Արեւելք եր-
թալու համար:

Եւրոպայի շոգեկան Հնդկաստանէն հոս
հասաւ 1067 զորական լերեւելով:

Էօֆրաթ շոգեկանն ալ 1142 զորա-
կան բերաւ:

Լոնտոն 14 յունի:

Այլ հաւատուէն թէ Լորտ Պիքոնիլիտ
10 միլիոն լիրայի վարկ պիտի խնդրէ ե-
րեսփոխանաց ժողովէն:

Հաւանական կը կարծուի թէ դադ-
թականութեանց նախարար Լորտ Գար-
նարօն և Հնդկաստանի նախարար Լորտ
Սայիզալըն հրաժարական պիտի տան:

Միտլանդ փառան երէկ տեսակցու-
թիւն մ'ունեցաւ Լորտ Պիքոնիլիտի հետ:

ՄԱՍՆԱԴՈՐ ՀԵՌԱԳԻՐԲ

Աղբիւրնապոլիս 12 յունի:

Միւլէյման փառային բանակն Օթլուք
Քէօյի մօտ դաբուելով՝ Թաթար Բաղար-
ճըգէն դէպ ապս կողմ ետ քաշուեցաւ:
Այսին թէ Թաթար Բաղարճը քաղաքը
բողբու մէջ է:

Մեծ սարսափ կը տիրէ հոս: Անթիւ
փախտեալք կը դիմեն քաղաքս: Սակայն
երկաթուղին դեռ մինչև Եւրոպայու և
Պէլոպոն կը բանի:

Վառնա 12 յունի:

Այսին թէ զինադադարն սկսած է,
բայց Ռուսը հինգ շաբթի օրէն ի վեր
սաստկապէս կը ռախկնան զՌուսնոք:

Ձիւն կուգայ և ջուրը սաստիկ է:

Վառնա 15 յունի:

Ռուսերը կը շարունակեն ռախկնել
զՌուսնոք:

Լոնտոն 14 յունի:

Օտմ. Բոն.	9 7/16
Փոս.	1865 9 3/4
»	1869 9 3/8
»	1871 34 1/4
»	1872 13 3/4
»	1873 9 5/16
» Եղիպոս.	53 1/2
Անգլ. Բոն.	93 1/8

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Ահաւաստիկ նախարարական վեր-
ջին փոփոխութիւնն հրամայող կայ-
սերական խաթման թարգմանու-
թիւնն:

«Իմ մեծաշուք վեզիրս Ահմէտ Համաթ
փառաւ:

Ներկայ պարագայից ծանրութեանն ու

* Ֆիւլպէի համար ալ նոյնը կը գրու-
ուի: Կոնս. Խոմ.

կարեւորութեան ինչպէս նաև արագ մի-
ջոցներ ի գործ դնելու հարկին պատ-
ճառաւ նախարարաց կատարեալ և հիմ-
նական փոփոխութիւն մը հարկաւոր ե-
ղած էր:

Բարձրագոյն Էմինէմ փառային բար-
ձր հանձարն ու յաջողութիւնն, ու
բոց բազմաթիւ փորձերը տուած է ի
մեծ գոհութիւն Մեր, ճանչաճ ենք և կը
ճանչենք. բայց իւր առողջութեան վի-
ճակը կը պահանջէ, որ ժամանակ մը
տեղութեան գործերէ հեռի կենայ:

Հետեւաբար, ձեր փորձեալ արժանի-
քն և զգացմանց ու դադարաւորաց ուղ-
ղութիւնը նկատելով, Մեծ—Եւրոպայու
թեան բարձր և կարեւոր պաշտօնը ձեզ
կը յանձնենք:

Նմանապէս, կայսերական պալատին
նախարգ քարտուղար և ծերակուտի ան-
դամ Սայիտ փառան ներքին գործոց
նախարար:

Երեսփոխան անդամ Նալըգ փառան
անձնական դանձուս նախարար:

Մաքսատանց վերատեսուէր Քիանի փա-
ռան երևմտից նախարար:

Երեսփոխան անդամ Ահմէտ Վէֆիգ
փառան հասարակաց կրթութեան նա-
խարար:

Երեսփոխան Սալուգ փառան մար-
սատանց վերատեսուէր կանուանենք:

Տրապիզոնի կուսակալութեան կարեւ-
րութիւնը նկատելով, երևմտից նախարգ
նախարար Եուսուֆ փառային կը յանձ-
նենք:

Հասարակաց կրթութեան նախարգ
նախարար Քէմալ փառան ծերակուտի
անդամ կանուանենք:

Յայտնի է որ այս միջոցիս ամենէն
կարեւոր և մեր ամենուս բովանդակ ու-
ղղութիւնը գրաւող իրողութիւնը թըշ-
նամուցն յարձակումն է:

Դէմ դնելու համար մեր պատրաստած
գինուորական զօրութիւններն հաւասար
էին թշնամուցն զօրութեան, ինչպէս որ
պատերազմին սկսած ժամանակ փորձե-
լը տեսանք՝ փառաւոր և բազմաթիւ
յաղթութիւններ տանելով:

Վերջին օրերս մեր կրած ձախոր-
դութեանց զլխաւոր պատճառը քանի մը
զինուորական հրամանատարաց սխալ-
մունքն եղած է, որոց վրայ մանրամասն
և անաչառ քննութիւն ըլլալով՝ արժան
եղածը պիտի որոշուի:

Այլ փոփոխութիւնք որ Մեր միւս նախա-
բարաց հետ համաձայնութեամբ ետան-
դափոյթ աշխատիք, անցելոյն ազգաբա-
րութիւններէն օգուտ քաղէք, Մեր տէ-
րութեան բարեկամներուն իմաստուն և
բարեխիղճական խորհուրդները մարի ընէք,
և Մեր տէրութեան ամրողջութիւնն ու
անխախտութիւնն ապահովելու ջրաղիք:

Կայսերական հրամանաւ՝
Ծովային գործոց նախարար Սա-
յիտ փառան միանգամայն արքունե-
եաց Միւշիւր անուանեցաւ՝ Վէզիր-
բութեան աստիճանաւ:

Բերայի Միւլէյմարի Մէհմէտ
փառան օստիկանութեան նախարար
անուանեցաւ Միւշիւրութեան աս-
տիճանաւ:

Արքունի պալատան երկրորդ
քարտուղար Լէպիլ պէյն առաջին
քարտուղար անուանեցաւ:

Բումբէլէն բազմաթիւ խալափա-
ղովորէք կը գաղթեն ի մայրաքա-
ղաքըս, թուրք լրագրաց խօսքին
նայելով, մինչև կիրակի օրն եկող
գաղթականաց թիւը 20000 է կը
հասնի, մեծ մասը թշուառ վիճա-
կի մէջ:

Կապի Օսման փառան Քիւնէվէն
հեռագիր մը ուղղելով առ Մեծ—Ե-
ւրոպայն՝ շնորհակալութիւն կը
յայտնէ իւր նկատմամբ ցոյց տուած
համակրական զգացումներէն, և կը
ժանուցանէ թէ յիշեալ քաղաքէն
Շարբուլ կերթայ, որ իրեն բնակու-
տեղի որոշուած է:

Երեկոան Պատրիսթի մէջ հե-
տեւալը կը կարդանք:

«Չաթալճա բնակիւթ Պուլղարնե-
րն ապստամբելով, տեղական իշ-
խատութիւնը պարտաւորեցաւ մայ-
րաքաղաքիս ամրութեանց այս կող-
մը՝ Հատըմ—Քէօյ փոխադրուիլ»:

Կիրակի օրն Ալբիանուպօլէն
մայրաքաղաքս եկող կառախուսէն
8 կառք՝ որք գաղթականներով լի
էին, մայրաքաղաքիս 36 քիլոմէթր
մնալով՝ երկաթ ուղւոյն վրէժէն գուրս
ինկան և հետեւաբար երթեակու-
թիւնն արգիլուեցաւ:

Կըսուի թէ բաղմաթիւ դժբաղդ-
ներ զոհ եղան այս արկածին:

Կը լսենք թէ 17-18 տարեկան
գաւառացի Հայ աղջիկ մը, որ Թուրք
ընտանեաց հետ յարաբերութիւն
ունի եղեր, երէկ մահմետական կը-
րօնքն ընդունել է:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ

է Ս Ն Ա Մ Ը Ո Ւ Մ Ո Ւ Մ Ի Է	
2 յունի. երկուշաբթի իրիկուն	10, 10
3 յունի. երեքշաբթի առաւօտ	40, 9
բացուեցաւ	10, 1
ժամ 6 ին	28
Բումբէլի երկաթուղի	264

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂՈՅ	
Կ. Պոլս 2 ցունիւար	
Սօսիթ թէ լէնկալի բաժ. Անգլ. լիւ. 3,	
• փոխանակութեան	2, 10
Կ. Պոլս Պաշտօնային	3, 10
Քրէտի լէնկալ	3, 5
Քրէտի Օսթրո—Թուրք	—
Փոխ. 1863	50
• 1865	51
• 1869	47
• 1872	16 50
• 1873	45
Թրամուայ	Օսմ. լիւ. 0 80

ԸՆԹԱՅՔ ԴՐԱՄՈՅ	
2 ցունիւար	
Անգլ. լիւ. 409 5	
Դրամային սակի	86 27
Իմիւլուր Ռուս	8 30
Գլըքսից	50 37
Հինգ ֆրանք	—
Հինգ նոյ	120 20
Պիլնի	175

Ա. Գ. Ա. ՅԻՆ.

Այսօր խառն ժողովը Ս. Պատրի-
արք Հօր առնել պիտի գումարի քա-
նի մը կարեւոր խնդրոց վրայ խոր-
հրդակցելու համար:

Ի նպատակ մ'ալի չայ գաղթա-
կանաց տղ և տղ տեղերէ դրկուած
գրամական նպատակն անցեալ շաբ-
թու 30 գաղթական ընտանեաց
մարդ գուրս երկերիւս քառանոց
թուղթ բաժնուեցաւ Աղդ. վար-
չութեան ձեռքը:

Պապականութենէ դարձող Թարգ-
մանեան Անտօն վարդապետն, որ
իր հայրենիքը՝ Հունգարիա՝ երթա-
լու համար մայրաքաղաքէն մեկնած
էր ուղղակի Ռումելիոյ գնացեր և
հոն գաղթականական ընթացի մէջ կը
գտնուի:

Յօքլանի պատուարժան ազգայ-
նոց կողմէն անցեալներն յիշեալ
վարդապետին նկատմամբ Ս. Պատ-
րիարքին գանգատանոց գիր եկած
ըլլալով, հրաման գնացեր էր իրեն
որ անմիջապէս մեկնի. սակայն Ան-
տօն վարդապետ անստեղծ Ս.
Պատրիարք Հօր հրամանին, մինչև
հիմա Յօքլան կը գտնուի, և հոն
կը շարունակէ տուրքին իւր գա-
լթական ընթացքը:

Կը յուսանք որ Ռումելիոյ ազ-
գայինք իմանալով իշխալ վարդա-
պետին դրկուած Պատրիարքական
հրամանն, այսուհետև չեն ընդու-
նիր զայն իրենց մէջ:

Կը լսենք թէ Ս. Պատրիարք Հօր
հրամանաւ և Բերայի Թաղ. խոր-
հրդոյ և քահանայից դատուն ճան-
կեղծ փախաքանօքն ու հաճու-
թեամբ Գեր. Տ. Յ. Միլեան Ս.
Երրորդութեան եկեղեցւոյ քահա-
նայից դատն ընդունուել է:

Հետեւալը Աղդ. Պատրիարքա-
րանէն հաղորդուած է մեզ ի հրա-
տարակութիւն:

Ասկէց առաջ Աղդ. վարչութեան
որոշմամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր
կողմէ յատուկ շրջաբերական մի զըր-
կուած էր ինչպէս մայրաքաղաքիս
եկեղեցիները՝ նոյնպէս և գաւառ-
ները, որպէս զի պատերազմի թատր
հանդիսացած տեղերուն թշուառ
չայ գաղթականաց համար հանգա-
նակութիւն բանան և գոյացած ար-
գիւնքը հետզհետէ ի Պատրիարքա-
րան ուղարկեն իւր նպատակին ծա-
ռայեցնելու համար:

Սոյն շրջաբերականին համաձայն
գաւառներէն սկսած է հետզհետէ
յիշեալ հանգանակութեան հաշուոյն
գումարներ գալ ի Պատրիարքարան
և առ այժմ եկածներն են՝

Վառնայէն	920 զլ (ինք հարիւր քսան)
Երիպոտէն	50 (յիսուն) սակի Օսմ.
Էստրէնէն	22 (քսաներկու) » »
Պաղատէն	55 (յիսուն և չորս) » »
Թեոպոլիսի դալիք գումարներն	
ալ սոյնպէս պիտի հրատարակուին:	
Վարչութիւնը հաւատարիմ գան- ձապահ մը յանձնած է այս գու- մարներուն պահպանութիւնը, մին- չև որ անոնց բաշխման և գործադ- րութեան մասին պէտք եղած տնօ- րէնութիւնը լինի. որ նմանապէս պի- տի հրատարակուի ի լրագրիս:	
30 գեղտ. 1877	(Ինչէ)

Ա. Գ.

Բերայի Նարեկեան վարժարանի
հոգաբարձութիւնը պատիւ ունի ծա-
նուցանել մեծարգոյ ուսումնասիրաց
որ յատ շիկայ չորեքշաբթի (4 յունի.
1878) գիշեր ժամ ճիշդ երեքին Մե-
ծապատիւ Տրաքոր ճէշալեան Էֆէն-
տին մէք աղքատիկ դպրոցին առ-
ժամանակեայ օգնութիւն մ'ընելու փա-
րաքով ազգասիրաբար յանձն առած
է ճառարտել նոյն դպրոցին սրահին
մէջ, որ ի Թաքսիմ Բում Մէշալըք
փողոց:

Յիշեալ Տրաքոր Էֆէնտին իւր խօ-
սելիք ճառին նիւթ պիտի ընէ բնա-
խօսութեան մէկ երեւելի ճիւղը, այ-
սինքն մարդուս ուղեղին մարմնոյն
հետ ունեցած հրաշալի առնչութիւ-
նը, և անոր իմացական կարողութիւն-
ները, որոց վրայ իրեն յատուկ եղած
ճարտասանութեամբը հասարակ և
հասկանալի լեզուով պիտի բացատրէ-
ուտի հազարաքանութիւն ամենայն
իրաւամբ կը յուսայ որ այսպիսի հե-
տաքրքրական և ուսումնական դա-
սակցութիւն մը խիստ հաճելի պի-
տի լինի պատուարժան հասարակու-
թեան կողմէն, և միանգամայն օ-
գուտ աղքատիկ դպրոցի:

Մուտք մէկ տասնոց թղթադրամ
Բերա 1 յունի. 1878

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԹՈՐՈՍ ԼԵՒՈՆԻ

ԳՐԵԱՅ ԾԵՐԵՆՑ

Սոյն գեղեցկահիւս վիպասանու-
թեանն որոյ պատմական աղբիւրք
Ռուբինեան հարստութիւնէն առնուած
է, և որ Բրիտանի 1443 թուականին
Հայոց Կիրիկիոյ մէջ վերստին ձեռք
բերած իշխանական մեծութեան ճըշ-
գրատալով պատկերն է, ամեն Հայ
պէտք է փութայ մին օրինակ ունենալ
կը ծախուի ամեն գրախաճառաց
քով գին 2 ֆրանք:

